



ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ

(Հոգևոր ճեմարանի
Բ դասարանի ուսանող)

Պ Ա Պ Ս

Սողո պապս մի որսորդ էր, մեր սարերին սիրահար,
Զավախեթի լեռները սեզ չափում էր նա անդադար.
Հանգիստ չէր տա հանդում վագոդ եղնիկներին խելագար,
Թիթեռների հետևն ընկնող, մանուկի պես փարից փար:

Մի որսորդ էր այն ծերունին, և դեռ հիշում եմ հիմա,
Երբ գալիս էր որսը ուսին, ինչպես Տորքր ածդահա,
Վայր էր դնում անշունչ որսին, ապա կանչում. «Ա՛յ Զանա,
Զուր բեր, լվա իմ ռափերը, է՛լ չեմ կարող դիմանա...»:

Դուրս էր վազում տասու իսկույն, ձեռին մի կռօժ ջուր բռնած,
Ինչպես սիրուն սարի եղնիկ, մեղմ գեփյուտից փայփայված:
Վեր էր փաշում իր քեները և շարժումով նագանի,
Լվանում էր հոգնած ռափերն իր ամուսնուն փաշարի:

Ախալփալափն, Ախալցխիսեն ինչ փանկան ունեցել,
Բոլորի հետ գոտեմարտել ու երբեք չի հաղթվել:
Զավախեթի սահմանից դուրս մեծ համբավ է ունեցել,
Նրա օրով ո՛չ մի ոսոխ սիրտ չի արել գյուղ մտնել:
Ծնողները նրան փոքրուց փախցրել են Վրաստան,
Ու հեռու է եղել նա միշտ իր լեռներից սրբազան:

Իմ սիրելի, երազ պապիկ, մանկույթունից մինչև վերջ,
Տրոսվել ու լաց է եղել հայրենասեր սիրտդ մեծ:
Դու չապրեցիր Հայկի երկրում, բայց բոռնիկը ֆո վերջին,
Հասել է սուրբ հողին նրա, ինչպես ծիտը իր բնին:
Նա կդառնա ձգող մագնիս, կհավաքի մասնիկներ,
Որ ընկած են փոշու միջին և տարածված աշխարհներ:
Եվ կձուլի մասնիկներից այդ նորաստեղծ մի աշխարհ,
Որ երազն էր ֆո մեծ սրտին, ֆո հին երազն անկատար:

